# Արբիտրաժը՝ տեխնոլոգիական վեճերի լուծման մեթոդ

Միջազգային արբիտրաժն իդեալական մեթոդ է տեխնոլոգիական վեճերի լուծման համար (ներառյալ արհեստական բանականություն, առաջադեմ ռոբոտաշինություն, տվյալների երլուծություն, IoT հիմնովին փոխում է անհատների, ձեռնարկությունների և կառավարությունների փոխազդեցությունը միմյանց հետ: Արագ փոփոխություններ խորացնում են ոլորտի բարդություններըև ոլորտում առկա անորոշությունները: Այսպիսով, զարմանալի չէ, որ բոլոր շահագրգիռ կողմերի մակարդակներում տեխնոլոգիական վեճերը դառնում են ավելի տարածված: Վերջին տարիներին ամբողջ աշխարհում և, մասնավորապես, Եվրոպայում, առևտրային տեխնոլոգիական վեճերը լուսաբանաման հիմնակաան թեմաներից են՝ սկսած հեռահաղորդակցության և SS ոլորտներից մինչև բժշկատեխնոլոգիական ոլորտ, և շատ ավելի նման արբիտրաժներ անհասանելի են մնում հանրությանը: Ավելին, ICSID-ում տեխնոլոգիական վեճերի քանակն, ըստ երևույթին, կրկնապատկվել է 2022 թվականին՝ համեմատած երեք տարի առաջվա արդյունքների: Վերջին տարիներին միջազգային արբիտրաժն ի հայտ է եկել որպես արդյունավետ մեխանիզմ՝ լուծելու բարդ միջսահմանային վեճերը, որն ընդգրկում է տարբեր ոլորտներ, հատկապես տեխնոլոգիական ոլորտը: Տեխնոլոգիական ընկերությունները գնալով ավելի շատ են ընդունում միջազգային արբիտրաժը տարբեր համատեքստերում վեճերը լուծելու համար: Հատկանշական օրինակները ներառում են “LG Corporation”-ի հաջող արբիտրաժային վճիռը իր մրցակցի՝ ճապոնական Sharp Corporation-ի դեմ արտոնագրային իրավունքի խախտման արբիտրաժային գործով, “Plintron Holdings”-ի պաշտպանությունը բրազիլական “Surf Telecom” ընկերության կողմից ներկայացված պայմանագրի խախտման գործով. և “Monsoon Blockchain Storage” ընկերության հաղթանակն արբիտրաժում կորեական LED արտադրող “Magic Micro” ընկերության դեմ՝ 2018 թվականին բաժնետոմսերի գնման պայմանագիրը խախտելու համար: Թեև տեխնոլոգիական ընկերություններն ավանդաբար դիմել են առևտրային արբիտրաժի, ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մակարդակում, կա աճող միտում, երբ

ընկերությունները դիմում են ներդրումային արբիտրաժին՝ լուծելու իրենց ներդրումների վրա ազդող պետությունների ենթադրյալ վնասակար վարքագծի հետ կապված բողոքները: Օրինակ՝ նախորդ տարվա հունվարին “Huawei” ընկերությունը արբիտրաժային գործով հայց հարուցեց Շվեդիայի դեմ՝ վերջինիս մերժումից հետո “Huawei” ընկերության արտադրանքի արգելքն իր 5G-ի ներդրումից հանելու վերաբերյալ: “Huawei” ընկերությունը վկայակոչել է Չինաստան-Շվեդիա երկկողմանի ներդրումային պայմանագրի (BIT) դրույթները՝ պնդելով, որ Շվեդիայի արգելքը հակասում է BIT-ի շրջանակներում չինացի ներդրողի իր իրավունքներին: Այլ տարածաշրջանին վերաբերող մեկ այլ օրինակում բազմազգ տեխնոլոգիական ընկերությունը և նրա համապատասխան տեղական դուստր ձեռնարկությունը վերջերս հղում են արել ներդրումային պայմանագրի՝ Լատինական Ամերիկայի մեկ պետության հետ վեճը լուծելու համար: Վեճի մասին պետությանը ծանուցելուց հետո ընկերությունը կարողացել է հարցը լուծել խաղաղ ճանապարհով: Մեկ այլ օրինակ՝ տարբեր աշխարհագրական տարածաշրջանից, բազմազգ տեխնոլոգիական ձեռնարկությունը և նրա տեղական դուստր ձեռնարկությունը լուծեցին վեճը Լատինական Ամերիկայի պետության հետ ներդրումային պայմանագրի միջոցով: Վեճի վիճակի մասին ծանուցելուց հետո ընկերությունը խաղաղ լուծում է ստացել:

**Ինչու՞ է արբիտրաժն իդեալական բարձր տեխնոլոգիաների վեճերի համար:**

1. Արբիտրաժն ավելի ճկուն է լուծելու բարդ տեխնիկական կամ գիտական վեճերը՝ շնորհիվ իր փորձագիտական կարծիք տրամադրելու հնարավորության:
2. Արբիտրաժում կողմերը կարող են ընտրել փորձառու արբիտրի, ով օժտված է ոլորտին հատուկ գիտելիքներով, համապատասխան գիտության և/կամ տեխնոլոգիայի բնագավառում փորձառությամբ և իրավական ոլորտի գիտելիքներով:
3. Արբիտրաժը նվազագույնի է հասցնում բիզնես գործընկերների և հաճախորդների միջև հաստատված երկարաժամկետ հարաբերություններին վնաս պատճառելու ռիսկը:

4. Արբիտրաժում վերադասության կարգող բողոքարկում նախատեսված չէ, ինչը հանգեցնում է ընկերությունների ծախսերի խնայողության՝ շրջանցելով ժամանակատար վերադասության կարգով դատական բողոքարկման ընթացակարգերը:

5. Չբացահայտման կամ գաղտնիության մասին համաձայնագրերը սովորաբար կիրառվում են տարբեր առևտրային միջավայրերում՝ առևտրային գաղտնիքները և գաղտնի բիզնես տեղեկատվությունը պաշտպանելու համար:

**Աղբյուրներ՝**

Toby Fisher, Korea's LG wins damages in a dispute with Sharp, Global Arbitration Review (May 30, 2022), available at https://globalarbitrationreview.com/article/koreas-lg-wins-damages-in-dispute-sharp.

Plintron succeeds in Arbitration against Surf Telecom, Plintron (June 8, 2022), available at https://plintron.com/plintron-succeeds-in-arbitration-against-surf-telecom/.

Monsoon Blockchain Storage, Inc. v. Magic Micro Co., ICDR Case No. 01-19-0002-4620, Final Award (April 14, 2022), available at https://jusmundi.com/en/document/decision/en-monsoon-blockchain-storage-inc-v-magic-micro-co-ltd-final-award-thursday-14th-april-2022.

Huawei Technologies Co. v. Kingdom of Sweden, ICSID Case No. ARB/22/2, Request for Arbitration (Jan. 7, 2022), available at https://www.italaw.com/cases/9128.

Arbitration in Technology Disputes Eric Leikin, Lutz Riede, Matthias Hofer and Sue Ng Freshfields Bruckhaus Deringer 11 November 2022, https://globalarbitrationreview.com/review/the-european-arbitration-review/2023/article/arbitration-in-technology-disputes#footnote-083